ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!



ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

ԳՏՄՀ—ԱԶՆԵՎԻՐՈՒՏ
Բագու - 1933 - Մոսկվա

13089
14 .06. 2013
622.333
Հ-90
04 AUG 2010
1008
38547
2617

ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

1. Աղրկոմկոսի (ը) Բաքվի Կոմիտեի 1933 թ. ոգոստոսի 26-ի վորոշումը։
2. Կանոնադրություն հորափորման մեջ աշխատանքի վարձատրության մասին 1933 թ. համար։
3. Կանոնադրություն հորափորման մեջ ինժեներ-տեխնիկական աշխատավորների աշխատավարձի և պարգևատրման մասին։
4. Կանոնադրություն հորափոր վարպետների պարգևատրման մասին։

ԲԱԳՈՒ — 1933 թ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՍՀ—ՍՍՌԱ
им. А. Масиджиева
Ц. Ирадиева

Խմբագրեց Հ. Ելչիբեկյան
Տեխ. խմբագիր Կ. Թառլանյան

Հանձնված է արտադրության—սեպտ. 15-ին
Ստորագրված է տպագրության—սեպտ. 22-ին
Տպագրական թերթերի թիվը—1¾
Տպագրական նշանների թիվը—78400

Типография „Красный Восток“ Бакполиграфа, Карантинная, 84
Главлит 5277. Заказ № 6511. Ст.-фор. А-6. Тираж 1000

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Կուսակցության և կառավարության վորոշումը, վորով Ազնեվթի առաջ մարտական խնդիր է դրվում 1933 թ. պլանից դուրս տալ մոտ մեկ միլիոն նավթ և 1934 թ. ապահովել նավթահանության ավելացումը մինչև 20 միլիոն տոննա—պահանջում է արագորեն ծավալել հորափորման աշխատանքները և համառ պայքար մղել արագ և վորակով հորափորման համար։

Ազնեվթում հորափորումը դանդաղացնելու պատճառներից մեկը, վորը առաջացրեց 1933 թ. պլանի առաջին յեռամսյակում հետ մնալը, հանդիսանում եր մինչև վերջին ժամանակներս գոյություն ունեցող հորափորման աշխատանքներում յեղած աշխատավարձի սիստեմը։ Այդ սիստեմը բարդ ու խճճված եր, հենվում եր մեծ թվով կոտորակային գնահատությունների վրա, անհասկանալի եր բանվորին։ Այդ սիստեմը չեր ստեղծում հորափորի շահագրգռվածությունը աշխատանքի վորակում և արտադրական ժամկետների ու պլանների կատարման գործում, հաշվի չեր առնում մեծ խորություններում և ամուր շերտերում աշխատանքի դժվարությունները (հավասարանք) և արտադրության համար ինչասակար բանվորական ուժի հոսունություն եր առաջացնում։

Այդ սիստեմը վճռականապես դատապարտված է Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեի 1933 թ. ոգոստոսի 26-ի վորոշմամբ։ Հենց այդ նույն վորոշումը տալիս է հաստատ և պարզ դրույթներ ու ծրագիր՝ հորափոր-

ման գործում յեղած աշխատավարձի սիստեմի վերակառուցման համար։ Աշխատանքի վարձատրության նոր սիստեմը ամբողջովին վերացնում է հավասարանքը, ապահովում է վարձատրությունը՝ համապատասխան ծախսված աշխատանքի քանակի և վորակի ու ստեղծում է բանվորի ուղղակի շահագրգռվածությունը արտադրական առաջադրանքների կատարման և գերակատարման համար։

Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեի վորոշման և նրա հիման վրա Ազնավթի ու Նավթայինների Միության կողմից մշակված հորափորման խմբի, ինժեներատեխնիկական աշխատավորների և հանքափոր վարպետների վարձատրության և պարգևատրման կանոնադրությունների հետ պետք է ծանոթանան Ազնավթի հորափորման բոլոր աշխատավորները։

ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեի 1933 թվի ոգոստոսի 26-ի վորոշումը

Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեն արձանագրում է, վոր խոշոր սխալներ և աղավաղումներն կան բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատանքի վարձատրության սիստեմում, վոր թույլ են տրված Ազնավթի ու Նավթագործների Միության Ադրբեջանի Կոմիտեյի կողմից.—հորափոր խմբի աշխատավարձի անկայունություն, աշխատավարձի սխալ կազմակերպում, նավթահորերի փորումը ժամանակին ավարտելու և վորակական ցուցանիշների համար մղվող պայքարի բացարձակապես անբավարար խթանում, վոր բանուժի հոսունության աճում է առաջացրել։ Գործող նորմաներում «Լեռնային աշխատանքների պայմաններում ամենափոքրիկ առանձնահատկությունների և շեղումների» (Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ռ. Ս. Հ. Մ. Ժողկոմխորհի Դոնբասում աշխատավարձի սիստեմի մասին ունեցած վորոշումը) հաշվի առնելու միանգամայն սխալ ձգտման հե-

տևանքով, աշխատավարձի կազմակերպման պրակտիկայում հորափորման մեջ, տեղի յե ունեցել գնահատումների և նորմաների բազմազանություն ու կոտորակայնություն։

Աշխատավարձը հաշվելու գոյություն ունեցող միջոցներն այնքան բարդ են և անհասկանալի, վոր հորափոր բանվորների մեծ մասը հնարավորություն չունի իր աշխատավարձն անձամբ հաշվելու յեվ ստուգելու, թե արված հաշիվները վորքան են ճիշտ։

Աշխատանքի վարձատրման սիստեման և պրակտիկան, վորով բանվորը աշխատանքի ընկզբում հաստատուն նորմաներ և գնահատումներ չի ստանում, վորովհետև ամեն ամիս աշխատանքը կատարելուց հետո եյական ուղղումներ են մտցվում նրան տրվելիք աշխատավարձի չափում, բացառիկ անկայունություն են առաջացնում բանվորների աշխատավարձում, մեծ շփոթություն աշխատանքը վարձատրելու և առաջացնում են այնպիսի դրություն, վոր բանվորները չեն իմանում իրենց տրված աշխատանքի պլանը։

Միանգամայն սխալ է Ազնեվթի աշխատանքի սիստեմում արմատացած հետին թվով նոր նորմաներ ու գնահատումներ մտցնելու պրակ-

տիկան։ 1933 թվի համար հորափորման գործուս աշխատանքի վարձատրման սիստեման, վոր տրված է Ազնեվթի հրամանով մայիսի 9-ին և նավթահանքերին է ուղարկված հունիսի սկզբին (գործողության մեջ է դրված ապրիլի մեկից)։

Աշխատանքի վարձատրման գոյություն ունեցող սիստեմում բացակայում են նավթահորը ժամանակին և ժամանակից առաջ ավարտումը խթանող բոլոր տարրերը։

Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեն առանձնապես շեշտում է Ազնեվթի և Նավթագործների Կենտրոնական ու Ադրբեջանի Կոմիտեների կողմից կոլեկտիվ կամպանիայի ժամանակ հորափորման մեջ հարաճուն աշխատավարձի սիստեմի վերացման սխալ լինելը, առանց հորը ժամանակից առաջ վերջացնելու համար խրախուսանքի վորևվե ձեվ սահմանելուն։

Այդ բոլորը հանգել են նրան, վոր Ազնեվթը առանձին ավարտած հորերի վերաբերմամբ պարգևատրելու սխալ պրակտիկա յե մտցրել, առանց վորևե տեղական պրոֆմիութենական կազմակերպությունների մասնակցության և պարգևատրումները չի ոգտագործել հարվածայնության և աշխատանքի սոցիալիստական մեթոդների հետագա ծավալման համար։

Հորափորման խումբը հավատացած չէ, թե արդյոք տվյալ նավթահորը ժամանակից առաջ վերջացնելու համար, կպարգևատրվի թե վոչ, իսկ գոյություն ունեցող պրակտիկան պարգևատրությամբ չի ընդգրկում բոլոր հորափոր խմբերը, վորոնք հաջողությամբ կատարել են արտադրական առաջադրությունը։

Աշխատանքի կազմակերպման սիստեմը վոչ միայն չի նպաստում հորափոր խումբը տվյալ հորի վրա մինչև նրա ավարտումը ամրացնելուն, այլ և հոսունության համար ստեղծում է բոլոր նախապայմանները։

Մանավանդ անբավարար է աշխատանքի վարձատրման ներկա սիստեմը հորափորման այնպիսի կարևորագույն տեղամասերում, ինչպես խոր հորափորությունն է, հետախուզական հորափորությունը, մի սիստեմա, վոր հաշվի չի առնում աշխատանքի ամբողջ բարդությունն ու պայմանների դժվարությունները։

Ավելին, հետախուզական հորափորման մեջ սահմանված է մի միանգամայն սխալ սիստեմա, վոր հակասում է աշխատանքի մասին յեղած հիմնական որենքներին—այն է, բանվորին հասնող աշխատավարձի 20 տոկոսը պահվում է մինչև հորի փորելը վերջացնելը (այսպես կոչված (դեպոզիտ), վորպես հորում աշխատող բանվորներին աշխատանքում պահելու բյուրոկրատական միջոց։

Հետախուզական աշխատանքներում վարձատրության գոյություն ունեցող գործարքային ոսվտեմը ֆիկտիվ է, վորովհետև տեխնիկապես հիմնավորված նորմաներ չկան։ Բանվորներին հասատուն աշխատավարձ է վճարվում գործարքային տարիֆի չափով, անկախ կատարած գործից և ընդհանրապես ամսեկան առաջադրություններն ու պլանները կատարելու համար խրախուսանք չկա։

Հորափորման աշխատանքների հիմնական կազմակերպողի—հորափոր վարպետի աշխատանքի վճարման սիստեմը (հասատուն ռոճիկ, վոր հաճախ պակաս է լինում իր ղեկավարության տակ յեղող հորափորների աշխատավարձից, ամսական պարգևատրում, վոր ուղղակի կախված է հորափոր խմբի հավելյալ աշխատանքից, անվստահություն, թե հորը ժամանակից առաջ վերջացնելու համար կպարգևատրվի) չի խթանում հորափոր վարպետի պայքարը պլանը կատարելու համար, նավթահորը ժամանակին հանձնելու, հորափորման վորակի համար և իջեցնում է նրա ունեցած դերն արտադրության մեջ։

Հորափորման մեջ ինժեներա-տեխնիկական աշխատողների վճարման սխալ լինելը կայանում է նրանում, որ անփոփոխ պաշտոնեական ռոճիկ է սահմանվում առանց աշխատանքի վորակը և պլանը կատարելու չափի աստիճանի հաշվառման, որ պարգևատրություն սահմանվում է պլանը գերակատարելու համար առանց հաշվի առնելու հորի փորումը ժամանակին սկսելը և դեռևս ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատանքի բարձր վարձատրության պրակտիկան վարչության ապարատներում չի խթանվում արտադրությունում աշխատող ինժեներա-տեխնիկական աշխատողների աշխատանքը և չի ապահովում աշխատանքի բարձր ցուցանիշները։

Նավթագործների Միության Ադրբեջանի Կոմիտեն ու նրա տեղական կազմակերպությունները չեն կարողացել աշխատավարձի հարցերն իրենց ամբողջ աշխատանքի կենտրոնում դնել, չեն ապահովել նավթագործների կարևորագույն մասի—հորափոր բանվորների աշխատավարձի վճարման վերաբերվող հարցերի վրա ամենորյա հսկողություն, այլ սահմանափակվել են տարիֆային համաձայնությունների ձևական բյուրոկրատական կնքումով և հավանություն են տվել աշխատանքի վարձատրության այն սխեմեներին, որոնք իրենց մեջ պարունակում են մատնանշված խոշորագույն թերություններն ու աղավաղումները։

Ադրկոմկուսի (բ) Բագվի Կոմիտեն առանձնապես մատնանշում է Ազնեվթում գոյություն ունեցող դրության այն աննորմալությունը, յերբ հորափորման գրուպպայի վարիչը, ինժեներա-տեխնիկական անձնակազմը և հորափոր վարպետը գործով վոչ մի մասնակցություն չեն ունենում նորմաներ և գնահատումներ սահմանելու և աշխատավարձը կարգավորելու աշխատանքում և այդ բոլոր հարցերը դրվում են նորմայավորողի վրա, որը դրանց լուծում է «գործառնական նորմայավորողների» հիմունքով առանց վորևվե կապ ունենալու արտադրական պլանի կատարման ընթացքի հետ։

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵՆ ՎՈՐՈՇՈՒՄ Է.—

1. Վերացնել աշխատանքի վարձատրության ներկա սիստեմը հորափորման բոլոր բնագավառներում։ Առաջարկել Ազնեվթին և Նավթագործների Միության Ադրբեջանի Կոմիտեին մինչև սեպտեմբերի 5-ը ներքոհիշյալ դրությունների հիման վրա կնքել տարիֆային հա-

մաձայնություն, այնպես, վոր աշխատավարձի նոր սիստեմը կյանքի մեջ մտցվի այս տարվա սեպտեմբերի 15-ից սկսած։

2. Նոր տիպային նորմայացուցակների հիմունքով յուրաքանչյուր հորին վերաբերվող սահմանված նորմաները անմիջականորեն հանձնել հորափորման գրուպաներին վարիչներին, նրանց վրա դնելով աշխատանքի կազմակերպման, աշխատանքի կարգավորման և աշխատավարձի ֆոնդի ծախսման համար անձնական պատասխանատվությունը։

Հորափորման գրուպպաների վարիչներին իրավունք տալ 10 տոկոսի սահմաններում բարձրացնել և իջեցնել նորմաները՝ նայած տվյալ հորի հորափորման պայմաններին։

Հորափոր վարպետին իրավունք տալ ինքնուրույն կերպով 10 տոկոսի սահմաններում իջեցնել հորափոր խմբի առանձին մասնակցողների աշխատավարձը, աշխատանքին անբարեխիղճ վերաբերվելու և աշխատանքի վատ վորակի համար։

Հորափոր վարպետը գրուպպայի վարիչին և ներկայացնում պարգևատրելու հորափոր խմբի առանձին մասնակիցներին։

3. Առաջարկել Ադնեվթին մինչև սեպտեմբերի 10-ը տիպային նորմայացուցակ մշակել ըստ

յուրաքանչյուր ռայոնի կառուցված խոշորացրած նորմաների հիման վրա (փորած մետր, կանդուկտորի և խողովակասյունի իջեցում և ամրացում)

այնպես, վոր յուրաքանչյուր հորի խոշորացրած նորմաների ընդհանուր թիվը 8—10-ից չանցնի։

4. Առաջարկել Ադնեվթին և Նավթագործների Միության Ադրբեջանի Կոմիտեին նոր տարիֆային համաձայնության հիմքում դնել հետևյալը.

ՀՈՐԱՓՈՐ ԽՄԲԻ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

1. Մետրի համար վճարվող աշխատանքի գործարքային վարձատրություն մտցնել կառուցված մի մետր անցնելու խոշորացրած նորմաների վրա ըստ խորության ինտերվալների, հաշվի առնելով փորվող լեռնային տեսակներն ու նրանց գտնված տեղի խորությունը, կանդուկտորը և խողովակասյունը բաց թողնելու և ամրացնելու ժամանակի նորմաները։

Մի մետր փորելու ժամանակի նորմայի մեջ մտցնել զուտ հորափորման ժամանակը, գործիքի բաց թողնելն ու բարձրացնելը, ծռության փոփոխությունը, լվանալն ու կարտոտաժը։

Կանդուկտորը և խողովակասյունը բաց թողնելու և ամրացնելու ժամանակի նորմայի մեջ մտցնել լայնացնելը, խողովակասյունի հավաքե-

լը, լվանալը, խողովակայունը բաց թողնելը, ցեմենտ լցնելը, գործիք փոխելը, փորձելը և այլ ոժանդակ աշխատանքները։

Խորության յուրաքանչյուր ինտերվալի համար մի փորված մետրի համար միջին հաստատուն գնահատում է սահմանվում, ինչպես և գնահատում է սահմանվում կոնդուկտորը և խողովակասունը բաց թողնելու և ամրացնելու համար։

2. Հորափորման գործի ընթացքում պատահած պարապուրդները ժամանակի նորմայի մեջ է մտցվում, և յենթակա չեն առանձին վճարման։

Ցերկար ժամանակ էլեքտրական ուժ, հորում բաց թողնելու խողովակներ և ցեմենտ չը լինելու պատճառով առաջացած պարապուրդները, ինչպես և յեթե վարչության կարգադրությամբ հորափորության ժամանակավոր ընդհատումների համար վճարվում է որենքի հիման վրա, ժամանակային տարիֆի 50 տոկոսի չափով։ Թույլ տալ լրիվ ժամանակային տարիֆի չափով վճարել հետևյալ դեպքերում։

ա) Ցերբ խողովակների, ցեմենտի, էլեկտրական ուժի բացակայության պատճառով, և վարչության կարգադրությամբ հորափորման աշխատանքի ընդհատումների ժամանակ՝ հորերը պահպանելու աշխատանքներ են կատարվում։

բ) Ցերբ կավային լուծույթի շրջանառությունը վերականգնելու համար աշխատանքներ են կատարվում, հորափոր խմբից անկախ պատճառներով կավային լուծույթը անդադար յերկար ժամանակ կորչելու պատճառով։

գ) Ցերբ հորափորման մեջ ընդհատումներ են լինում շատրվանների և հրդեհների պատճառով, վոր տեղի են ունենում ժայթքումների հետևանքով—ընդմիջումներ հորափոր խմբից անկախ պատճառներով, և յերբ քամին պոկոտում է բուրգը։

3. Հորափորման փաստական տևողությունը վորոշելիս՝ յերկրորդ կետում ցույց տրված աշխատանքները և հորում աշխատանքի ընդհանուր որացույցային ժամկետը կատարելու համար գործադրված ժամանակը—հանվում է։

4. Ցեթե հորափոր խմբի պատճառով ավելանում են ծռության համար սահմանված նորմաները (բացի այն դեպքերից, յերբ ժամանակին չի արվում չափումը), հորափոր խումբը պարտավոր է վարչության ցուցմունքով կատարել ծռությունն ուղղելու բոլոր աշխատանքները՝ առանց առանձին վճարի, և ժամանակի նորմայի մեջ մտցնելու։

5. Հորափորման ժամանակին ու ժամկետից առաջ ավարտումը, աշխատանքների կատար-

ման վորակը բարձրացնելը և ավյալ հանքահորում սկզբից մինչև վերջը հորմափորման պարտիան ամբացնելը խրախուսելու համար մտցնել պարգևատրում—

ա) Նավթահորի փորումը ժամանակին ու ժամկետից առաջ ավարտելու համար.

բ) Ծռության սահմանված նորման իջեցնելու համար։

Հորափորումը ժամանակին ավարտելու համար պարգևների չափը սահմանել հետևյալը.

1-ին կարգի նավթահորերի համար	.	7%
2-րդ „ „ „	.	10%
3-րդ „ „ „	.	14%

Հորափորումը ժամանակից առաջ ավարտելու համար պարգևների չափը մեծացվում է մինչև 10 տոկոսի արագացման սահմաններում։

Առաջին կարգի նկատմամբ	.	1%
Ցերկրորդ „ „	.	1½%
Ցերրորդ „ „	.	2%

10 տոկոսից ավելի արագացնելու համար

Առաջին կարգի նկատմամբ	.	1½%
Ցերկրորդ „ „	.	2½%
Ցերրորդ „ „	.	3%

ամեն մի տոկոսին։

Ծռության նորման իջեցնելու ամեն մի աստիճանի համար պարգև է վճարվում ըստ նավթահորերի.—

Առաջին կարգին	.	5%-ի չափով
Ցերկրորդ „	.	8%-ի „
Ցերրորդ „	.	11%-ի „

Պարգևների սահմանված չափերը հաշվում են ավյալ նավթահորի ընդհանուր գնահատությունից։

6. Ցերը նավթահորը ժամանակին է փորվում կամ ժամկետից առաջ, առանց վորևե ավարիայի, փորման պարտիային հասանելիք պարգևի չափը կրկնապատկվում է։

7. Հորափորումը ժամանակին ու ժամկետից առաջ ավարտելու համար պարգևները բաշխվում են տարիֆային դրույքների և աշխատած որերի համեմատ։

Ծռության նորմաները իջեցնելու համար պարգևները բաշխվում են հետևյալ կարգով.—

Հորափորներին	.	60 տոկոս.
Արգելակողներին	.	20 տոկոս.
Բանվորներին	. . .	20 տոկոս պարգևների գումարից։

Հանձնարարել Ազնավթին ու Նավթագործների Միության Արկոմիտեին տարիֆային հա-

1000 38544

մաձայնությամբ ճշտել վերափորելու ժամանակի համար հորափոր պարտիայի վճարման կարգը։

Հանձնարարել Ազնեվթին ու Նավթագործների Միության Ադրկոմիտեյին սահմանել կոմբինացրած յեղանակով փորող, պտուտակային ու տուրբինային հորափորման բրիգադների մեջ պարգևների բաշխման կարգը։

8. Պարգև ստանալու իրավունքը կորցնում են այն բանվորները, վորոնք արձակված են պրոգուլի և ներքին կարգապահության կանոնները խախտելու համար, այլ և այն բանվորները, վոր հորից հեռացել են մինչև հորափորումը վերջացնելը՝ բացի այն դեպքերից, յերբ հորից հեռացել են հիվանդության պատճառով և կանչվել են Բան.-Գյուղ. Կարմիր Բանակը։

9. Խոր հորափորման և մանավանդ տուրբինային հորափորման յուրացումը խթանելու համար սահմանել աշխատանքի վարձատրման հետևյալ սկզբունքները.—

ա) Խոր հորափորման մեջ—մինչև յուրացրած խորությունները վարձատրել գործարքային կերպով ըստ առանձին մշակված նորմաների։

Վոչ յուրացրած խորություններում թույլատալ ժամանակային պարգևատրման սխեմը՝

վճարելով ըստ յերրորդ կարգի գործարքային տարիֆով, արտադրական առաջադրության կատարման աստիճանից կախված։

Ամսական առաջադրությունը լիովին կատարելու համար պարգևատրել գործարքային տարիֆի 25 տոկոսի չափով։

Խողովակասունը ժամանակին ու ժամկետից առաջ իջեցնելու համար պարգևատրել հորերի կառուցվածքին համապատասխան միևնույն հիմունքներով, ինչպես սովորական հորափորման ժամանակ։

Ծուության սահմանված նորման իջեցնելու համար սահմանել պարգևների բարձրացրած տոկոս։

Հանձնարարել Ազնեվթին ամեն մի ռայոնի համար սահմանել չյուրացրած խոր հորափորման շերտերն ու հորիզոնները.

բ) Տուրբինային հորափորման մեջ—վարձատրել միևնույն սկզբունքներով, ինչ պտուտակայինի մեջ։

Հանձնարարել Ազնեվթին առանձնապես մշակել տուրբինային հորափորման նորմաները։

Հաշվի առնելով տուրբինային հորափորման մեջ զբաղված բանվորների առանձին վորակավորումը, հանձնարարել Ազնեվթին ու Նավթա-

գործների Միության Ադրկոմիտեին տան որ-
վա մեջ վերանայել նրանց համար սահմանված
տարիֆային դրույքները։

10. Հետախուզական աշխատանքների պլանի
կատարումը և 1934—35 թվերի ֆոնդերի
նախապատրաստությունն ապահովելու, հորա-
փորման կադրերն ամրացնելու և յեղած ծռում-
ները լիկվիդացիայի յենթարկելու համար հե-
տախույզ հորափորման մեջ սահմանել աշխա-
տանքի վարձատրության հետևյալ սիստեմը.—

ա) Մտցնել աշխատանքի վարձատրման ժա-
մանակային-պարգևատրման սիստեմ, վճարելով
ըստ գործարքային տարիֆի և ամսական առաջա-
դրությունը կատարելու համար պարգևատրելով
հարյուր տոկոս. վերին ինտերվալում կատա-
րածի համար գործարքային տարիֆի 20 տոկոս,
ներքին ինտերվալում 30 տոկոս։

բ) Հաշվի առնելով հեռավորությունը, աշ-
խատանքի բարդությունը և ծանր կլիմայական
ու կուլտուր-կենցաղային պայմանները՝ սահմա-
նել տարիֆի հաստատուն հավելում հեռավորու-
թյան համար, առաջին դրուպպայի հետախու-
զումների համար 20% և 2-րդ դրուպպայի հե-
տախուզումների համար—30%։

Հետախուզումների բաշխումն ըստ դրուպպա-
ների կատարել տարիֆային համաձայնությամբ։

գ) Ամեն մի խողովակասյունն իջեցնելուց
հետո հորափորման վորակի բարելավումը խթա-
նելու համար, ծռության սահմանված նորման
իջեցնելու համար պարգև տալ ամեն մի աստի-
ճանին գործարքային տարիֆի գումարի 10%-ի
չափով, սյուներն իջեցնելու և ամրացնելու նը-
կատմամբ կառուցվածքի համեմատ աշխատանք-
ները ժամանակին կատարելու համար պարգևա-
տրել միևնույն սկզբունքներով, ինչ վոր շահա-
գործման հորափորման մեջ հորափորությունն
ավարտելու համար։

ՀՈՐԱՓՈՐ ՎԱՐՊԵՏ

1. Սեպտեմբերի 1-ից մտցնել Ծանր Ար-
դյունաբերության Ժողկոմի հրամանով սահման-
ված նոր պաշտոնական դրույքներ հորափոր
վարպետների համար։

2. Վորպես կանոն սահմանել, վոր հորա-
փոր վարպետի աշխատավարձը պետք է առնը-
վազն 10—15% բարձր լինի իր ղեկավարած
պարտիայի հորափորների աշխատավարձից։

3. Պարգևատրել հորափոր վարպետներին
ամսական առաջադրությունը գերակատարելու
համար, հորերը ժամանակին ու ժամկետից
առաջ ավարտելու համար, այլ և սահմանված

նորմայի հանդեպ ծուռության չափն իջեցնելու համար։

4. Ագնեվթն ու Նավթագործների Միությունը պետք է մշակեն և գործադրության մեջ մտցնեն հորափոր վարպետի պարգեվատրման տախտակ՝ ամսական առաջադրությունը դերակատարելու համար։

5. Պարգևների հետևյալ չափերը սահմանել. — ավտոմատներն ու կարգավորիչները պարտադիր կերպով ոգտագործելիս ծուռությունը կրճատելու համար սահմանված նորմայի դիմաց ամեն մի աստիճանին ըստ նավթահորերի հետևյալ չափերով—

Առաջին կարգին	. . .	3%
Երկրորդ »	. . .	5 »
Երրորդ »	. . .	7 »

6. Սահմանվածված վորակը պահպանելիս հանքահորը ժամանակին ավարտելու համար հորափոր վարպետներին պարգեվատրել—

Առաջին կարգին ամսական ռոճկի		40— 60%
Երկրորդ » » »		80—120 »
Երրորդ » » »		150—250 »

Նավթահորի փորումը ժամանակից առաջ ավարտելու համար լրացուցիչ պարգև վճարել մինչև 10%-ի սահմաններում—

Առաջին կարգին	. . .	3%
Երկրորդ »	. . .	5 »
Երրորդ »	. . .	8 »

և 10%-ից ավելի բարձր արագացնելու դեպքում մի տոկոսին —

Առաջին կարգի ամսական ռոճկի				5%
Երկրորդ »	»	»		8 »
Երրորդ »	»	»		12 »

Ավարիայի ամեն մի դեպքի համար, վորի լիկվիդացիան մինչև 24 ժամ է քաշում, ամսական պարգևի գումարն իջեցվում է 25%։ Լիկվիդացիան մինչև 48 ժամ տևող ավարիաների համար պարգևն իջեցնում է 50%։ Նավթահորը ժամկետին կամ ժամկետից առաջ ավարտելու դեպքում կատարված պահումները վերադարձվում են հորափոր վարպետին։

Երբ նավթահորը փորվել է առանց վորևե ավարիայի, ժամկետին կամ ժամկետից առաջ ավարտելու պարգևը կրկնապատկվում է։

ՀՈՐԱՓՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

1. Սեպտեմբերի մեկից հորափորության ինժիներա-տեխնիկական աշխատողների համար Ծանր Արդյունաբերության Ժողկոմատի հրամա-

նով սահմանված պաշտոնեական դրույքները մտցնել։ Ագնեվթի հորափորման կազմակերպչական կառուցվածքի առանձնահատկությունների առնչությամբ հրամանի մեջ մատնանշված ցուցակի մեջ մտցնել հետևյալ աշխատողներին. հորափորման գրուպպայի ինժեներներին—300-ից մինչև 500 ռուբլի, փորող ստանոկները հավաքող մեքենավարին—200-ից մինչև 375 ռուբլի, ավարիաների, ցեմենտելու գործի շաղախի, փորող դուբերի գործի ինժեներներին—350-550 ռուբլի։

2. Դրույքները սահմանվում են միացության կառավարիչի կողմից՝ յուրաքանչյուր տվյալ աշխատողի արտադրական պլանը քանակական և վորակական ցուցանիշներով կատարելուց, աշխատանքի հաջողությունից ու վորակից։

Ըստ կիսամյակների հանքի դիրեկտորը յուրաքանչյուր ինժեներա-տեխնիկական աշխատողի անցյալ ժամանակամիջոցի արտադրական գործունեության գնահատական է տալիս, դրույքը բարձրացնելու կամ իջեցնելու նպատակով միացության կառավարչին ներկայացնելու համար։

Այն դեպքում, յերբ տվյալ աշխատավորը գործով չարդարացրեց բարձրացրած ռոճիկը,

հանքի դիրեկտորը իջեցնում է բարձրացրած դրույքը հասցնելով կոլպայմանագրով սահմանածի չափին։

3. Հորը փորման մեջ մտցնելու և մետրաժի պլանը գերակատարելու համար, հորը շահագործման հանձնելու պլանը պարտադիր կերպով կատարելու դեպքում, շահագործական ինքնարժեքը իջեցնելու համար—պարգևատրություն է սահմանվում հետևյալ աշխատողների համար.—գրուպպայում վարիչին, վարիչի տեղակալին (ավագ ինժեներ) վարիչի հերթափոխներին, հորափորման ինժեներներին և գործիքները վորսող վարպետին։

Հորափորման գրասենյակում—գլխավոր ինժեներին, գլխավոր ինժեների ոգնականին, փորման ինժեներներին (ավարիաների, ցեմենտելու գործի, շաղախի, սարքավորման, փորող դուբերի գործի) և գործիքները վորսող վարպետին։

4. Հանձնարարել Ագնեվթին և Նավթագործների Միության Ագրկոմիտեյին պարգևներն ու նրանց չափը հաշվելու կարգը սահմանել այնպես, վոր ինժեներա-տեխնիկական աշխատողների պարգևների չափը պլանային ցուցանիշները զգալիորեն գերակատարելու դեպքում մի ամսում հանի ամսական դրույքին։

5. Ավարիաների դեմ տարվող և ավարիաների վերացումն արագացնելու համար մղվող պայքարը խթանելու համար սահմանել, վոր ամսական պարգևը, ավարիաները վերացնելու համար գործադրվող ժամանակը սահմանվածից անցնելու դեպքում, պետք է խիստ իջնի։

6. Հորափորման գրասենյակի կառավարիչին իրավունք տալ արտադրության մեջ նոր տեխնիկան չյուրացնելու համար (ավտոմատների, ֆասոնային դուրերի ոգտագործում և այլն) առանձին ինժեներ-տեխնիկական աշխատողների պարգևը 30 տոկոսի սահմանում իջեցնել։

* *
*

1. Առաջարկել Ազնեվթին և Նավթագործների Միության Ադրկոմիտեյին տարիֆային համաձայնության մեջ նախատեսել հորափորության մեջ ներկայումս փորվող հորերի նկատմամբ աշխատավարձի նոր սիստեմների կիրառման կարգը։

2. Առաջարկել Ազնեվթին և Նավթագործների Միության Ադրկոմիտեյին մի ամսվա ժամկետում վերացնել հորափորման ոժանդակող աշխատողների աշխատավարձի սիստեմը։

1. Ելեկտրոմանայորների
2. Փականագործների
3. Հյուսների
4. Գործիքների գործակատարների
5. Կավի գործարանի աշխատողների
6. Զ դողների
7. Շոֆֆեր—եքսպեդիտորների։

3. Առաջարկել Ազնեվթին և Ադր. Կ. Կ. (բ) Բագկոմի կադրերի բաժնին մի ամսվա ընթացքում վերանայել հորափորության գրասենյակում և գրուպպաներում աշխատող նորմավորողների պաշտոնը ինժեներներով և տեխնիկներով փոխարինելու, նորմավորելու աշխատանքին վերադարձնելով այն նորմավորողներին, վորոնք ուրիշ աշխատանքի յեն փոխադրված։

4. Առաջարկել Նավթագործների Միության Ադրկոմիտեյին, կուսակցության ռայկոմներին և Ազնեվթին հորափորության մեջ աշխատավարձի նոր սիստեմ մտցնելու շուրջը մասսայական-բացատրական աշխատանք ծավալել, ապահովելով այդ սիստեմի յուրացումը հորափորության յուրաքանչյուր բանվորի կողմից։

Ադր. Կ Կ (բ) Բագկոմն առաջարկում է անշարժ, բյուրոկրատական և հետադիմական տարրերի դեմ վճռական պայքար մղել, վորոնք, անկասկած, կփորձեն նոր սիստեմն արագությամբ և ճշտությամբ կյանքի մեջ մտցնելու գործին դիմադրություն ցույց տալ։

Նոր սիստեմի մտցնելը պետք է ապահովի աշխատանքի արտադրողականության վճռական վերելքը ու նոր հրապարակներում 300 նոր նավթահորեր գործի գցելու կուսակցության և կառավարության առաջադրությունների իր ժամանակին կատարումը։

5. Առաջարկել Ադրկոմկուսի (բ) Բագկոմի ագիտմասսաժնին և Ազնեվթհրատին յերկու տասնորյակի ընթացքում հրատարակել յերեք լեզուներով սույն վորոշումը տարիֆային համաձայնության հետ միասին, հանրամատչելի նոր սիստեմը բացատրող հաշվետեսական աղյուսակներ ունեցող թերթիկներ, այդ նյութերով ապահովելով հորափորության յուրաքանչյուր բանվորին։

Ադրկոմկուսի (բ) Բագկոմ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՐԱՓՈՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՎԱՐՁԱ-ՊԱՐԳԵՎԱՏԻՆ (ՍԴԵԼՆՈ-ՊՐԵՄԻԱԼՆԻՅ) ՎՃԱՐՄԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ 1933 Թ. ՀԱՄԱՐ

1. Շահագործական և շահագործա-հետախուզական հրապարակների վրա պատական և տուրբինային հորափորության բոլոր աշխատանքների համար հորափոր խմբերը վարձատրությունն են ստանում ուղղակի անսահման գործավարձային սկզբունքով։

Ժամանակի և գնահատությունների նորման սահմանվում է հորափորության ամեն 1 մետրի համար՝ հաշվի առնելով փորվող լեռնային տեսակն ու նրանց գտնվող տեղերը և առանձին հորի մեջ կոնդուկտորի իջեցումը և խողովակայունի ամրապնդումը։

2. Հորափոր խումբն իր ամբողջ կազմով, վորը վորոշվում է հերթափոխ աշխատանքի հաստատված գրաֆիկայով, ամրացվում է տրվյալ հորին՝ հորը փորելու ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում։

3. Բոլոր հորերը բաժանվում են յերեք կատեգորիայի՝ հորափորության աշխատանքների

բարդության տեսակով, վոր կապակցված են ամբողջ հորի փորման հետ (հավելված № 1)։

4. Նախքան հորափոր խմբի կողմից հորը փորելը գրուպպայի վարիչը, համաձայն տիպային խոշորացրած նորմայի, ավյալ հորի փորելու նարյադ է տալիս։ Նարյադում պարտադիր կերպով ցույց է տրվում.

1. Հորափոր խմբի անձնական կազմը ըստ արհեստների։

2. Հորը փորելու արտադրական առաջադրանքը։

ա) Հորի №-ը, հորափորության խմբակը և ռայոնը։

բ) Խորությունը (հորիզոն)։

գ) Տվյալ հորի փորելու ժամանակի գումարային նորման։

դ) Տվյալ հորի գումարային գնահատությունը։

յե) Հորը իր ժամկետին ավարտելու և ծռությունը 1°-ով պակասացնելու համար նշանակած պարգևի բացարձակ չափերը։

զ) Հորի կոնստրուկցիան (սյունների տրամագիծը և նրանց բաշխակների խորությունը, ջուրը փակելու միջոցը և դուրերի չափը)։

ե) Հորի կարգը (աշխատանքի բարդության աստիճանը)։

ը) Սարքավորման տիպը։

3. Հորափորման սկսելու և ավարտելու որացուցային ժամանակը։

4. Աշխատանքի պայմանները։

ա) Խորությունը ինտերվալով մի մետր փորելու ժամանակի նորման և սյունների (կոնդուկտոր, ջուրը փակող և շահագործական խողովակասյունի) ամրակնդման ժամանակի նորմաները։

բ) Խորությունը ինտերվալով մի մետր փորելու գնահատությունը և կոնդուկտորի և խողովակասյունների ամրակնդման գնահատությունները։

գ) Հորափորման վորակի տեխնիկական նորմաները (թույլ տրվող ծռության նորման)։

5. Նարյադը ստորագրում է հորափորման գրուպպայի վարչությունը։

6. Նարյադի վերաբերմամբ յեղող բոլոր վիճելի հարցերը և տարաձայնությունները վճռվում են գնահատա-կոնֆլիկտային հանձնաժողովում։

5. ա) 1 մետr հորափորման ժամանակի նորմայի մեջ մտնում է վորոշ ինտերվալներով խորության զուտ փորումը, հաշվի առնելով գրուպպայի հողի ամրության մետրների թիվը և

ավյալ ինտերվալի խորության հետ կապակցված բոլոր աշխատանքների վրա վատնված ժամանակը—ինչպիսին է գործիքի իջեցնելն ու բարձրացնելը, ծռության չափելը, լվանալը և կարոտաժը։

բ) Կոնդուկտորի յեվ խողովակայուններին ամրացնելու ժամանակի նորմայի մեջ մտնում են արտադրանքի ժամանակի հետևյալ աշխատանքները.—փորձնական խողովակայունի իջեցումը, լայնացումը, որսադնի խողովակների կոլենի մեջ հավաքումը, ցեմենտով լցնելը, գործիքի փոխումը, ցեմենտի փորելը և հերմետիկ ու ջուր փակելու փորձերը, նմանապես պրեվենտերների ու կողպեքների սարքավորման վրա տարած աշխատանքի ժամանակը։

Ծանոթություն. — Լայնացնելու վրա գործադրվող ժամանակը, որսադնի խողովակների հավաքումը և գործիքների (մոմերի) փոխելու վրա գործադրվող ժամանակը հաշվի է առնվում այն դեպքում, յերբ նրանք տեղի ունեն տվյալ հորում։

6. Գործարքային գնահատության հաշվի առնելիս հորափոր բանվորների խմբի 7 ժամվա բանվորական որը գնահատվում է հետևյալ տարիֆային դրույքով.

ԱՐՀԵՍՏԸ	ՀՈՐԵՐԻ ԿԱՐԳԸ					
	1-ին կարգ		2-րդ կարգ		3-րդ կարգ	
	Տարիֆային դրույքները ռուբլիներով և կոպեկներով					
	Ժամանակավարձի դրույք	Գործարքային դրույք	Ժամանակավարձի դրույք	Գործարքային դրույք	Ժամանակավարձի դրույք	Գործարքային դրույք
Հորափ. 2-րդ ձեռքի	6,00	7,50	—	—	—	—
» 1-ին »	—	—	6,80	8,50	—	—
» բարձր վորակի	—	—	—	—	8,00	10,00
Արգելակող	4,80	6,00	4,80	6,00	4,80	6,00
Հորափոր բանվոր .	3,80	4,75	3,80	4,75	3,80	4,75

Հորափոր բրիգադայի աշխատանքի գործարքային ժամի արժեքը.

I կարգի հորում	. 3 ռ.	20 կ.
II » »	. 3 »	43 »
III » »	. 3 »	64 »

7. Հորափոր խմբի վաստակի բաշխումը առանձին մասնակցողների մեջ կատարվում է հարաբերական կերպով՝ տարիֆային դրույքով և աշխատած գործարքայինի ժամանակով.

8. 1) Հորափորման գործի ընթացքում պատահած պարապուրդները ժամանակի նորմայի

մեջ են մտցնվում, և յենթակա չեն առանձին վճարման։

2) Յերկար ժամանակ էլեկտրական ուժի բացակայության, խողովակներ և ցեմենտ չլինելու պատճառով առաջացած պարապուրդները, ինչպես և վարչության կարգադրությամբ հորափորության ժամանակավոր ընդհատումների համար վճարվում է որենքի հիման վրա, ժամանակային տարիֆի 50 տոկոսի չափով։

Լրիվ ժամանակային տարիֆի չափով վճարելը կատարվում է հետևյալ դեպքերում.

ա) Յերբ խողովակների, ցեմենտի, էլեկտրո-եներգիայի բացակայության պատճառով, և վարչության կարգադրությամբ հորափորման աշխատանքի ընդհատումների ժամանակ, հորերը պահպանելու աշխատանքներ են կատարվում.

բ) Յերբ կավային լուծույթի շրջանառությունը վերականգնելու համար աշխատանքներ են կատարվում, հորափոր խմբից անկախ պատճառներով կավային լուծույթը անդադար յերկար ժամանակ կորչելու և նույնպես էլեկտրոեներգիայի բացակայության ժամանակ ավարյանների վրա աշխատելու համար.

գ) Հորափոր խմբից անկախ հորի շատրվանելու կամ հրդեհի պատճառով, վորը տեղի է

ունենում ժայթքումների հետևանքով հորափորման դադարեցնելու համար, նույնպես և քաջուց բուրգի տապալման դեպքում։

3. Հորը փորելու փաստական տևողությունը վորոշելու դեպքում հանվում են հորի փորելու որացույցային ժամկետից 2-րդ կետում ցույց տրված պարապուրդի և աշխատանքի ժամանակները, նույնպես և շահագործական սյունի մեջ ծակեր փորելու վրա վատնած ժամանակը։

9. Հորափորման սկիզբը համարվում է հորափոր գործիքի իջեցման առաջին որը։

Հորափորման վերջը համարվում է շահագործական խողովակասյունի իջեցնելու և հորի լվացումից հետո հորափոր խողովակների հանելու որը։

10. Ավարիայի վերացման վրա վատնած աշխատանքի ժամանակը, վորը տանում է հորափոր բրիգադը (հերթափոխ խումբը)—չի վճարվում։ Մնացած բրիգադներին (հերթափոխներին) ավարիաների վրա աշխատած ժամանակի համար վճարվում է ժամանակավարձային տարիֆով։

11. Հորափոր խումբը պարգևատրվում է հորափորման վորակի, այսինքն, վորոշած նոր-

մաների սահմաններում—ծռությունը պակասեցնելու ներքոհիշյալ չափերի համար.

ա) Թույլատրվող ծռության նորմաները սահմանվում են հետևյալները.

Ծռության մեջ	Հրապարակների ու ռայոնների համար		
	Ընդհանրապես	1. Կարա-Զուխուր 2. Ռամանի. Լենռայոն 3. Կալա-Մարդաքյան	1. Ստալինյան (բուխտա և հին հրապարակ) 2. Կ բովի 3. Մոլոտովի (Փութա-Դարա-Գ ոզ) 4. Լոկ-Բատան 5. Արտեմի կղզի 6. Բաքախանի-Սաբունչի
0—300մ	1,25°	1,50°	2,50°
300—400	1,50	1,75	2,75
400—500	2,00	2,25	3,25
500—600	2,50	2,75	3,75
600—700	3,00	3,50	4,50
700—800	3,50	4,25	5,25
800—900	4,00	5,00	6,00
900—1000	4,50	6,00	7,00
1000—1100	6,00	7,00	8,00
1100—1200	7,00	8,00	9,00
1200—1300	8,00	9 00	10,00
1300—1400	9,00	10,00	11,00
1400—1500	10,00	11,00	12,00
1500—1600	11,00	12,00	13,00
1600—1700	12,00	13,00	14,00
1700—1800	13,00	14,00	15,00
1800 մետր և բարձր առանց փոփոխության	14,00	15,00	16,00

բ) Տուրբինային հորափորման, նույնպես և ավտոմատներով (Խիլդի, Սկվորցովի, Բեբե-

զովսկու) աշխատելիս՝ ծռության համապատասխան սահմանները չպետք է դերազանցեն այն չափերի կեսից, որոնք ցույց են տրված սույն §-ի «ա» կետի մեջ, իսկ Շահնազարյանի ռեգուլյատորի համար այդ նորմաների 75 տոկոսի չափով։

12. Վարչությունը պարտավորվում է ծռությունը չափել առանց բացառության բոլոր փորվող հորերում հետևյալ կարգով.

ա) 1-ին և 2-րդ կարգի հորերի համար փորվելու ընթացքում 4 անգամից վոչ պակաս։

բ) 3-րդ կարգի հորերի համար ամեն մի 100 մետր փորելուց հետո։

13. ա) սույն կանոնադրությամբ պայմանավորված ծռության սահմանային պակասեցվող ամեն մի աստիճանի համար հորափոր խումբը պարգևատրվում է 1-ին կարգի հորի համար գործավարձայնից դուրս 50 տոկոսով.

2-րդ կարգի հորի համար գործավարձայնից դուրս 8 տոկոսով։

3-րդ կարգի հորի համար գործավարձայնից դուրս 11 տոկոսով։

բ) ծռության նորման պակասեցնելու, բայց տվյալ հորի փորելու ժամանակի նորման չկատարելու դեպքում, ծռությունը պակասեց-

նելու համար հասնող պարգևի 5 տոկոսով պակասեցվում է հորափորման ժամանակի նորմայի ամեն մի աստիճանի պակասեցնելու դեպքում.

դ) վերոհիշյալ պարգևի բաշխումը հորափոր խմբի մասնակիցների մեջ կատարվում է հետևյալ սկզբունքով.

Հորափորներին—ամբողջ պարգևի	60%
Արգելակողներին—ամբողջ պարգևի	20%
Հորափոր խմբի բանվորներին—ամբողջ պարգևի	20%

14. Նարյադի մեջ ցույց տրված ծռության նորման բարձրացնելու դեպքում հորափոր խումբը պարտավոր է վարչության ցուցմունքով, ծռության վերացման ամբողջ աշխատանքը կատարել (վերափոխել) առանց առանձին վճարի։ § 12-ի պայմանները չպահպանելու դեպքում վճարը տրվում է ժամանակավարձային տարիֆով։

Ծռությունը կարգավորելու վրա վատնած ժամանակը չի ավելացնում վոչ ժամանակի նորման, վոչ էլ նարյադի գնահատությունը։

15. Սահմանված ժամկետին հորի փորելը հաջող ավարտելու համար, պահպանելով աշխատանքի սահմանված վորակի (ծռությունը) պարգև է նշանակվում. 1-ին կարգի հորի համար—7 տոկոս, 2-րդ կարգի հորի համար—10 տոկոս, և 3-րդ կարգի հորի համար—14 տոկոս

գործարքային վարձատրությունից դուրս, վորը հաշվում է փաստորեն փորած մետրները բազմապատկելով համապատասխան ինտերվալների ու բաց թողնված խողովակների գնահատման վրա, ինչպես վոր ամրացման գնահատումներն են սահմանում։

Ծանոթություն.—Հորի ավարտման սահմանված ժամկետը համարվում է նարյադի մեջ վերջին գրանցված ժամկետը։

16. Ժամկետից առաջ հորի ավարտելու համար, այսինքն, նշանակված ժամկետից առաջ հորի փորումն ավարտելիս, աշխատանքի սահմանված վորակը պահպանելիս, սահմանվում է լրացուցիչ պարգևատրում հետևյալ չափերով.

Ամեն 1 տոկոս արագացման համար գործարքային վարձատրությունը՝ տվյալ հորի վրա ավելանում է

1-ին կարգ.—10%-ի սահմանում	. . . . .	1%
10-ից ավելի բարձր	. . . . .	1,5%
2-րդ կարգ.—10%-ի սահմանում	. . . . .	1,5%
10%-ից ավելի բարձր	. . . .	2,5%
2-րդ կարգ.—10%-ի սահմանում	. . . . .	2%
10%-ից ավելի բարձր	. . . .	3%

17. Տվյալ հորի փորելու ժամանակին կատարման կամ գերակատարման դեպքում, միաժամանակ բարձրացնելով ծռության համար վո-

ըոշած սահմանային նորման, պարգևի այն գումարը, որը հասնում է հորափոր խմբին հորը ժամանակին կամ ժամանակից առաջ ավարտելու համար, պակասում է 25 տոկոս սահմանված նորմայի դեմ ծռության ամեն 1 տոկոս բարձրացնելու համար։

Պարգևի իջեցումը կատարվում է հետևյալ սկզբունքով.

Հորափորներին	. 60% իջեցման գումարից
Արգելակներին	. 20% իջեցման գումարից
Բանվորներին	. 20% իջեցման գումարից

18. Հորի փորելը ժամկետին կամ ժամկետից առաջ հաջող կերպով ավարտելու, տվյալ հորի փորման ամբողջ ժամանակամիջոցում առանց վնասի ավարիա ունենալու դեպքում, սույն կանոնադրության § 15 և 16-ի համաձայն, հորափոր խմբին հասնող պարգևը տվելանում է 2 անգամ։

19. Հորը ժամկետին ու ժամկետից առաջ ավարտելու համար հասնող պարգևի գումարի բաշխումը հորափոր խմբի մասնակցողների մեջ կատարվում է հարաբերական կերպով տարիֆային դրույքների և աշխատած որերի համեմատ։

20. Գործալքման և ներքին կարգապահության կանոնները խախտելու համար բանվորին

հեռացնելու դեպքում կամ նրա հորափորման աշխատանքից հեռանալը—վերջնական հաշիվը տեսնելիս բանվորին զրկում է ծռության նորմայի պակասեցնելու և հորի ժամկետից առաջ ավարտելու համար տրվելիք պարգևներից։

21. Վարչությունը բանվորների հետ լիովին հաշիվ է տեսնում հորի փորման վարակի (ծռության, համաձայն վերջին չափումի), համաձայն սույն կանոնադրության §§ 11 և 13-ի, մինչև հորափորման ավարտումը հետևյալ դեպքերում.

1) աշխատավորին (Աշխատանքի Որենսգրքի հոդ. 47) «ա» և «յե» կետերի հիման վրա հեռացնելիս.

2) բան-Գյուղ. Կարմիր-Բանակ կանչվելու դեպքում.

3) բժշկա-վերահսկիչ հանձնաժողովի վորոշման հիման վրա ստիպված մեկնելու դեպքում։

22. Գրուպպայի վարիչին իրավունք է տրվում, համաձայն աշխատանքի պայմանների, 10 տոկոսի սահմաններում բարձրացնել կամ իջեցնել տվյալ հորի աշխատանքների նորման և գնահատությունը։

Ծանոթություն.—Նորմայի և գնահատությունների բարձրացումն ու իջեցումը

դրանցվում է նարյադի մեջ։ Գնահատության իջեցումն իր ուժը չի տարածում արդեն կատարված աշխատանքների վրա։

23. Հորափոր վարպետին իրավունք է տրվում ինքնուրույն կերպով 10 տոկոսի սահմաններում պակսեցնել հորափոր խմբի առանձին մասնակցողների աշխատավարձը՝ դեպի աշխատանքն անբարեխիղճ վերաբերմունք ցույց տալու ու գործի վատ վորակի համար և գրուպպայի վարիչին ներկայացնել հորափոր խմբի առանձին մասնակցողներին պարգևատրելու համար։

24. Վարչությունը հորափոր խմբի հետ վերջնահաշիվ է կատարում փորված հորի ավարտումից 10 որից վոչ ուշ։

Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում 1933 թ. սեպտեմբերի 15-ից։

Ա.գնեվ
Միությունն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ.

§ 1

1. 1933 թ. սեպտեմբերի 1-ից ինժեներա-տեխնիկական աշխատավորների վարձատրությունը վորոշվում է ստորև ցույց տրված սահմաններում ամեն մի պաշտոնի համար առանձին՝ միացության վարիչի կողմից (հանքի դիրեկտորի ներկայացնելուց հետո), ավելի աշխատավորի կողմից արտադրական պլանի վորակական և քանակական ցուցանիշների, աշխատանքի հաջող վորակի կատարման կապակցությամբ։

ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԻՆԺԵՆԵՐԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՌՈՃԻԿՆԵՐԸ

Գրուպպայի վարիչ	450—700
Գրուպպայի ավագ ինժեն. (վարիչի տեղ.) .	450—650
Գրուպպայի վարիչի ավագ ոգն.	325—550
Գրուպպայի ինժեներ	300—500
Վորսացող վարպետ	350—600
Հորափոր վարպետ	225—450

Ստանոկների մեքենավար	200—375
Հորափոր. գրասենյակի գլխավոր ինժեներ .	
» » (խոշոր հանքի) . .	500—900
» » (միջակ հանքի) . .	450—800
Գլխ. ինժեների (խոշոր հանքի) ոգնական .	400—800
» » (միջակ հանքի) ոգնական .	350—750
Ավարիաների, կավալուծության լցնելու, դուրերի, սարքավորումների վրա աշխատող ինժեներ	350—550
Նորմավորման ինժեներ	300—500

2. Հանքի դիրեկտորը կես տարին մի անգամ ամեն մի ինժ.-տեխ. աշխատավորի անցած ժամանակաշրջանի արտադրական գործունեության գնահատականն է կատարում՝ Միացության վարիչին ներկայացնելու համար՝ աշխատավորի վարձատրությունն բարձրացնելու կամ իջեցնելու համար։

3. Այն դեպքում, երբ տվյալ աշխատավորը գործով չարդարացրեց ռոճիկի բարձրացումը, հանքի դիրեկտորը բարձրացրած աշխատավարձը իջեցնում է կոլպյամանագրով սահմանածի չափերին։

4. Հորափոր վարպետի աշխատավարձը ինչպես կանոն, պետք է լինի տվյալ հանքում աշխատող հորափորի աշխատավարձից 10—15 տոկոս ավելի։

5. Հորափոր վարպետները պարգևատրվում են ամսական արտադրական առաջադրանքները կատարելու, նավթահորը շահագործման հանձնելու և աշխատանքի վորակի համար՝ հատուկ կանոնադրության հիման վրա։

6. Ներքոհիշյալ ինժ.-տեխ. աշխատավորների համար պարգևատրության է սահմանվում ա) հորերը շահագործման հանձնելու պլանը գերակատարելու, հորերի փորման և մետրաժի համար այն պայմանով, վորպեսզի 100 տոկոսով կատարված լինի ավարտված հորերի պլանը, և բ) շահագործման ինքնարժեքի իջեցման համար։

ԳՐՈՒՊՊԱ

ա) վարիչ
բ) ավագ ինժեներ (վարիչի տեղ.)
գ) վարիչի ավագ ոգնական
դ) հորափորման ինժեներ
յե) վորսացող վարպետ

ՀՈՐԱՓՈՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ա) գլխավոր ինժեներ
բ) գլխ. ինժեների ոգնական
գ) հորափորության, ավարիաների, կավալուծության, դուրերի, սարքավորման և շաղախի ինժեներ

դ) վորսացող վարպետ.

7. Ոպերատիվ պլանի գերակատարման առաջադրանքը վորոշվում է հորերի ավարտելու պլանի կատարման տոկոսների հիման վրա, մետրաժի պլանով և սկսված հորերի պլանով։

8. Պարգևատրումը սահմանվում է ամսական ռոճիկի վրա հավելյալ տոկոսները ավելացնելով՝ հետևյալ չափերով.

Պլանի գերակատարման %%-ը	Ամեն մի 1% գերակատարման համար ամսական ռոճիկին տրվող պարգևի %-ի չափը
100	—
100-ից մինչև 115	1,5
116-ից մինչև 130	2,0
131-ից մինչև 150	3,0
և ավելի	

Բերվող տոկոսը սահմանում է մետրաժի, ավարտված հորերի և սկսած հորերի պլանի կատարման տոկոսների կրկնապատկումով.

Ծանոթություն. — 1.— Պարգևատրման մատնանշված չափերը տրվում են միայն հորափորությունը ավարտված հորերի պլանի 100 տոկոսով ավարտման դիմաց։

Ծանոթություն.—2.— Խորը հորափորության բոլոր յերեք ցուցանիշներով պլանը չկատարելու դեպքում—մետրաժի, սկսված և ավարտված հորերի, թեկուզ և միաժամանակ հորափորության (խորը և վոչ խորը) ամբողջ պլանի գերակատարման դեպքում պարգևատրության գումարը իջնում է 100 տոկոս՝ խորը հորափորության պլանի 1 տոկոսը թերակատարելու համար։

9. Հորերում լրացուցիչ աշխատանքները, վորոնք փոխում են նախնական ծրագրած խորությունը և կոնստրուկցիան և վորոնք առաջացել են անկախ պարգևատրվող հորափոր աշխատավորների կոնտիգենտից, հաշվի չեն առնվում՝ տվյալ հորի ավարտման ժամկետի վերաբերյամբ։

10. Հորափորման շահագործման ինքնարժեքի իջեցման համար սահմանվում է լրացուցիչ պարգևատրություն հետևյալ չափերով.

ա) մետր հորափորության պլանային ինքնարժեքի ամեն 1 տոկոս իջեցումը մինչև 10 տոկոսի սահմաններում վճարվում է 2 տոկոս ըստ յեռամսյակի աշխատավարձի տարիֆի.

բ) 10 տոկոսից ավել ամեն 1 տոկոսի իջեցման համար վճարվում է 3 տոկոս, ըստ յեռամսյակի աշխատավարձի տարիֆի։

11. Ավարիաների կրճատման և նրանց վրա վատնվող ժամանակի վերացման նպատակով

Ազնեվթը սահմանում է ըստ ռայոնների վորոշ ժամանակի նորմա՝ այդ պատճառներով առաջացող հորափորման ընդհատումների համար՝ աշխատանքն և պարապուրդների ժամանակի ընդհանուր հաշվեկշռից, վորի բարձրացման համար սույն կանոնադրության 8 և 10-րդ կետերի հիման վրա տրվելիք պարգևը իջնում է հետևյալ կարգով.

ա) բացի սահմանված նորմայից ավարիային տրվող ամեն 1 տոկոս ժամանակի ավելացման համար պարգևը իջնում է 15 տոկոս, առաջին 3 տոկոսը բարձրացման սահմաններում:

բ) ավարիայի ժամանակի ամեն 1 տոկոս բարձրացման համար 3 տոկոս պարգևից պակասեցվում է 20 տոկոս։

12. Հորափորման գրասենյակի վարիչին և գրուպպայի վարիչին, առաջինին բոլոր գրուպպաների սահմաններում և յերկրորդին՝ գրուպպայի սահմաններում, գրասենյակի վարիչի հաստատումով իրավունք է տրվում այս կամ այն ինժ.-տեխ. աշխատավորին տրվելիք պարգևի չափը իջեցնել 30 տոկոսի սահմաններում՝ արտադրական նոր տեխնիկայի գործնական յուրացման և արմատացման, մասնավորապես ավտոմատների վոչ լրիվ ոգտագործման, ֆաստոնային դուրերի աշխատանքի պլանի չկատարելու և դուրը հորում նախատեսված չափով ճնալու նորման չկատարելու համար։

13. Մինչև յուրաքանչյուր ամսի սկիզբը հորափորության գրասենյակի վարչությունը պարտավոր է սույն կանոնադրության 1-ին կետում մատնանշված աշխատավորներին հայտնել տվյալ ամսի համար ըստ գրուպպաների առաջադրանքները։

Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում 1933 թ. սեպտեմբերի 15-ից։

Ազնեվթ
Միությունն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՈՐԱՓՈՐ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Պարգևատրել հորափոր վարպետներիդ ամսեկան առաջադրությունը գերակատարելու, հորը ժամանակին և ժամանակից առաջ ավարտելու համար, նույնպես և սահմանված նորմայի դեմ հորի ծռությունը պակասացնելու համար։

2. Ամսեկան առաջադրանքը գերակատարելու համար տրվող պարգևա-վարձատրության չափը վորոշվում է հետևյալ ձևով։

ա) Ամեն ամիս, հորափոր վարպետի կողմից սպասարկվող ամեն մի հորին տրված ոպերատիվ առաջադրության կատարման համապատասխան, պրեմիա է տրվում՝ վորպես տոկոս նրա աշխատավարձին՝ աշխատած ժամանակի համար։

բ) Ամեն ամսվա պարգևի չափը վորոշում է հորափորների՝ իրենց սպասարկվող հորի գերարտադրանքի միջին տոկոսներով և հորափոր վարպետի կողմից սպասարկվող հորերի թվով.

Հորափոր վարպետի սպասարկող հորերի թիվը	Տվյալ հորի հորափորների գերարտադրանքի միջին %
1	75
2	50
3	40

3. Վորակական ցուցանիշների գերակատարման համար, ամեն մի առանձին ավարտված հորում նորմայով սահմանված հորի ծռությունը պակասեցնելու համար սահմանվում է պրեմիա՝ վորպես տոկոսային հավելում հորափոր վարպետի ամբողջ աշխատավարձի վրա՝ հորափորության ամբողջ ժամանակամիջոցում, ավտոմատների լիովին ոգտագործելու դեպքում, հետևյալ կերպով.

Տոկոսային հավելում աշխատավարձի վրա հորի ծռության համար վորոշված սահմանային նորմայից 1% պակասեցնելու համար		
Հորերի կարգը		
I	II	III
3,0	5,0	7,0

Ծանոթություն.—Ավտոմատների չոգտագործելու դեպքում հորափոր վարպետը լիովին զրկվում է պարգևատրումից։

4. Հորը ժամանակին և պատշաճ վորակով ավարտելու համար հորափոր վարպետը պարգև է ստանում հետևյալ չափով.

I կարգին	. . . .	40— 60%	—ամսական ռոճկի
II »	. . . .	60—120%	» »
III »	. . . .	150—250%	« »

5. Հորը ժամանակից առաջ ավարտելու համար լրացուցիչ պարգև է տրվում՝ տոկոսներ ամսավարձին՝ հետևյալ չափերով, ամեն 1 տոկոս արագության համար.

Կարգ	Գերակատարում	
	Մինչև 10%	10%-ից ավելի
I	3,%	5,%
II	5,%	8,%
III	8,%	12,%

6. Ծռության համար սահմանված նորմայի պակասեցնելու, բայց իր ժամանակին հորը չավարտելու դեպքում, նշանակված պարգևը, վորը պետք է տրվեր այդ հորի ծռությունը պակասեցնելու համար, 10 տոկոս պակասում է, հորը ամեն 1 տոկոս դանդաղ ավարտելու համար։

7. Հորափորության վորակի համար պարգևատրումը կատարվում է համաձայն «Հորափոր խմբերի վարձատրման կանոնադրության», վորը ուժի մեջ է 1933 թվից։

8. Հորափորության պրոցեսում ավարիայի ամեն մի դեպք, վորն առաջանում է հորափոր խմբի և հորափոր վարպետի պատճառով, և վորի վերացումը տևում է մինչև 24 ժամ—նրա սկսվելու մոմենտից,—պակասեցնում է հորափոր վարպետի ամսական պարգևը 25 տոկոսով։ Այնպիսի ավարիաների դեպքում, վորոնց լիկվիդացիան տևում է 48 ժամ—դրա սկսվելու մոմենտից—պակասացնում է ամսական պարգևը—50 տոկոսով։

Ծանոթություն.—Այն դեպքում, յերբ հորը շահագործման է տրվում իր ժամանակին, վարպետից պահված գումարը վերադարձվում է։

9. Այն դեպքում, յերբ հորը փորված է առանց վորևե ավարիայի, ժամանակին կամ ժամանակից առաջ ավարտելու համար տրվելիք պարգևը կրկնապատկվում է։

10. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում 1933 սեպտեմբերի 15-ից։

ՀԱՎԵԼՎԱԾ № 1.

Ռայոնները	Հորիզոններ հորեր փորելու համար		
	1-ին կարգի	2-րդ կարգի	3-րդ կարգի
Լենինյան հանք	Բոլոր հորերը ՆԿՊ-ի վերին բաժնի և 1-ին պոդսվիտներ (ՎԿՍ)	1-ին և 2-րդ պոդսվիտների (ՍԿՍ և ՆԿՍ) բոլոր հորերը, նույնպես և ՆԿ, բացի շահագործական - հետախուզիչից խորությունը մինչև 1280 մետր	ՊԿ վրա յեղած հորերը և հյուսիս-արևելյան թևի բոլոր հորերը պոնտատոմական շերտերը և ներքևի խորությունը 1280 մետրից ավելի
Որջոնիկիձեի հանք	Վերին բաժնի բոլոր հորերը մինչև VI հորիզոնը բացառապես	Բոլոր հորերը VII, VIII և IX հորիզոններում	Բոլոր հորերը ՆԿՊ և ԿՊ ներքև
Ստալինյան հանք	Բոլոր հորերը վերին բաժնի մինչև XII սվիտը բացառապես	Բոլոր հորերը ներքին բաժնում մինչև XV սվիտան	XV սվիտայի և XV սվիտից ներքևն հորերը
Կարա-Զուխուր	I, III և VI հորիզոնի բոլոր հորերը բացառապես	V և VI հորիզոնի վրա յեղած բոլոր հորերը	ՊԿ և ԿՍ վրա յեղած բոլոր հորերը

Կիրովի հանք	Հարավ-արևմտյան բաժնի բոլոր հորերը և Խուրդալանում ՆԿ հորիզոնում	Հյուսիս-արևելյան մասի ՆԿ հորիզոնի և ՊԿ բոլոր հորերը	Շահագործական - հետախուզական հորերը ԿՆ հորիզոնում և ՊԿ 1000 մետրից ավելի
Փուրթա-Շուբանի	Բոլոր հորերը վերևի բաժնում (Վ. Ո.) և միջին բաժնում (Մ. Ո.)	Բոլոր հորերը ներքին բաժնում (Ն. Ո.)	Բոլոր հորերը ՊԿ (շահ.-հետախուզ.)
Սարանի կղզի	III, VI և V հորիզոնների բոլոր հորերը	Պ. Կ. վրայի բոլոր հորերը մինչև 800 մետր	Շահ.-հետ. հորերը Պ. Կ.-ի վրա 800 մետրից ավելի
Լենինաշեն		IV, V, VI և VII հորիզոնի վրայի հորերը	VIII «ա», IX հորիզոնի և պոնտ. վրա հորերը
Կարա		Սուրախանի սվիտայի բոլոր հորերը	Սաբունչու սվիտայի և Ֆ. Ս. բոլոր հորերը
Մարգաբյան Թուրքիան և Զրի			VI հորիզոնի վրայի և ներքևի հորերը

Հանրապետական գրադարան

ՀՀ Ազգային գրադարան
NL0278762

13084

622.323
Z-86

Новая система оплаты труда в бурений

ОНТИ—АЗНЕФТИЗДАТЬ
Баку — 1933 — Москва